Արգիշտիի փողոցից դեպի Մաշտոցի պողոտա և «Հաղթանակի» կամուրջ խաչմերուկ ուղղությամբ.

Բոլոր տրանսպորտային միջոցներին թույլատրվում է խաչմերուկը հատել 1-ին երթևեկելի գոտուց ուղիղ և աջ, իսկ 2-րդ երթևեկելի գոտուց՝ ուղիղ և ձախ ուղղություններով:

Արգիշտիի փողոցից դեպի Իտալիա և Գր. Լուսավորչի փողոցների խաչմերուկ ուղղությամբ.

Բոլոր տրանսպորտային միջոցներին թույլատրվում է խաչմերուկը հատել 1-ին, 2-րդ և 3-րդ երթևեկելի գոտիներից դեպի աջ՝ դեպի Գր. Լուսավորչի փողոց, իսկ 4-րդ երթևեկելի գոտուց՝ ուղիղ՝ դեպի Իտալիայի փողոց:

Գր. Լուսավորչի և Արգիշտիի փողոցների խաչմերուկ.

Գր. Լուսավորչի փողոցից ձախ շրջադարձը դեպի Արգիշտիի փողոց արգելվել է: Բոլոր տրանսպորտային միջոցներին թույլատրվում է խաչմերուկը հատել 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ գոտիներից միայն ուղիղ՝ դեպի Գր. Լուսավորչի փողոց-Մաշտոցի պողոտա խաչմերուկ:

Գր. Լուսավորչից Մաշտոցի պողոտայի խաչմերուկ, դեպի «Հաղթանակի» կամուրջի ուղղությամբ.

Բոլոր տրանսպորտային միջոցներին թույլատրվում է խաչմերկուը հատել 1-ին գոտուց աջ՝ դեպի Մաշտոցի պողոտա, 2-րդ և 3-րդ գոտիներից՝ ուղիղ՝ դեպի Պարոնյան փողոց, իսկ 4-րդ և 5-րդ գոտիներից՝ ձախ՝ դեպի «Հաղթանակի» կամուրջ:

Բեյրութի փողոցից դեպի Գր. Լուսավորչի և Արգիշտիի փողոցների ուղղությամբ.

Բոլոր տրանսպորտային միջոցներին թույլատրվում է խաչմերուկը հատել 1-ին գոտուց միայն աջ՝ դեպի Գր. Լուսավորչի փողոց ուղղությամբ, իսկ 3-րդ գոտուց՝ միայն ուղիղ՝ դեպի Արգիշտիի փողոց ուղղությամբ: 2-րդ Երթևեկելի գոտին հատկացված է հասարակական տրանսպորտին:

Իտալիայի փողոցից դեպի Խորենացու և Վ. Սարգսյան փողոցների խաչմերուկ ուղղությամբ.

Բոլոր տրանսպորտային միջոցներին թույլատրվում է խաչմերուկը հատել 1-ին գոտուց՝ աջ և ուղղիղ, 2-րդ գոտուց՝ ուղիղ, իսկ 3-րդ գոտուց, որը հատկացված է հասարակական տրանսպորտին՝ միայն ձախ ուղղությամբ:

Արգելվել է կանգառը Իտալիայի փողոցի աջակողմյան հատվածում:

Խորենացու փողոցում կատարվել են երթևեկության կազմակերպման փոփոխություններ. Մաշտոցի պողոտայի խաչմերուկից մինչև Վ. Սարգսյան փողոցի խաչմերուկ հատվածում ներդրվել է հասարակական տրանսպորտի համար առանձնացված գոտի, որով պայմանավորված՝ նշված հատվածում տրանսպորտային միջոցների կանգառը արգելված է:

Մաշտոցի պողոտա-Խորենացու փողոց և Մաշտոցի պողոտա-Ամիրյան փողոց խաչմերուկներում, Մաշտոցի պողոտայից դեպի «Հաղթանակի» կամուրջ ուղղությամբ հասարակական տրանսպորտի համար, փորձնական տարբերակով տեղադրվել է առանձին լուսացույց՝ «BUS» գրությամբ:

Կատարվել են լուսացույցերի աշխատանքային ռեժիմների փոփոխություններ:

Նշված փոփոխություններով պայմանավորված՝ առաջիկայում ևս նախատեսվում է նշված խաչմերուկներում փոփոխել լուսացույցային ռեժիմները, ինչը կնպաստի փոխադրամիջոցների ավելի անարգել երթևեկությանը և տրանսպորտային հոսքերի անընդհատության ապահովմանը հիմնական ուղղություններով: Նշված աշխատանքների ավարտից հետո՝ առաջիկա շաբաթների ընթացքում վարչության կողմից կսկսվեն իրականացվել Սարյան փողոցում երթևեկության կազմակերպման փոփոխությունները, որոնցով նախատեսում է Սարյան փողոցում կազմակերպել միակողմ երթևեկություն՝ Մաշտոցի պողոտայից դեպի Բաղրամյան պողոտա ուղղությամբ: